բան բերած Վանի նշանախէցների կէսը՝ նոյն իսկ ձեագրութեամբ պատահում են Ասորեստանական գրութիւնում 11 ցուցակներից և 18 իդէօգրաֆներից մեծ մասը փոխառնված է Ասորեստանականից։ Մնացեալ նշանները գոյացել են անշուշտ տեղային պարագայից ազդեցութեանց տակ։ Ընդհանրապէս խօսելով, Վանի արձանագրերը կազմում են չորրորդ *) սեպագրական, լիովին կանոնաղրեալ, սիստեմա։ Որովհետև Վանի արձանագրերը կանգնած են միայնակ առանց թարգմանութիւնների՝ հակառակ աքամենիդեաններինը, այս պատճառաւ չը կայ մի որ և է յուսալիր կէտ հեցարան նրանց վերծանութեան համար, բացառնելով այն ամենը, ինչ որ առած է ասորեստականից։ Բայց կրկին ակամայից կասկածանք է ծագում. Ասորեստանական նշանախէցները, տեղափոխվելով դէպի Վան, չէ՞ որ կարող էին այլայլել իրանց նշանակութիւնը, թէև պահպանել են իրանց ձևերը։ Ուրեմն ամեն բան մեզ անյայտ է. թէ չրիֆտ, թէ լեզուն և թէ ժամանակը։

Սրանից յետոյ պ. Պատկանեանը մի առ մի մատնացոյց է անում այն քսան և երեք (բացի Շուլցի քառասուն երկուսից) Վանի արձանագրերը, որք գտնված են վերջին ժամանակներում, անուանելով նրանց աղբիւրները։

Եթէ չը յիշենք Գրոտեֆենդի անունը, Վանի սեպագրերի վերծանութեան առաջին աշխատանքը պատկանում է կորովամիտ և բազմակողմանի Հինկսին (Ed. Hincks) իր յօդուածով On the Inscription of Van. Սա առաջին և ծանրակշիռ փորձ է անում այս սեպագրերի մեկնութեանց համար և մատնացոյց է առնում մի քանի այն դիրքերը, որոնց ի նկատի պիտի ունենան նրանք, որոնք ուզում են Վանի արձանագրերի վերծանութիւններովը պարապել։ Հինկսից յետոյ, քսան տարուայ ընթացքում, ոչ ոք չէ պարապում այս վերծանութիւններով, թէև սեպագրագէտները կողմնակի ցոյց են տալի այս արձանագրերի վրա։ Սրանց թուումն է Ֆիլօկսենա Լուցատօ *), որի գործ դրած միջոցները գիտնական արժէք չունեն և այս պատճառաւ մնացին առանց հետևանքի։ Լուցատօ ի միջի այլոց կարծում է թէ Վանի արձանագրերի լեզուն սանսկրիտ լեզուի մօտիկ է։ 1871 թուին լոյս է տեսնում Ֆր. Լենորմանի Lettres Assyriologiques առաջին հատորը, որի երկրորդ նամակը նուիրուած է, եթէ ոչ յատկապէս այս սեպագրերի ընթերցմանը, գոնեա հասու լինել նրանց իմաստին։ Այս երկասիրութիւնը խօսում է առաջին անգամ ոչ միայն սրանց լեզուի, այլ և ամբողջ բովանդակութեան վրա։ Ուրեմն, առաջին անգամն է, որ ուշադրութիւն է դարձրած սրանց պատմական նշանակութեան վրա... Հինկսը, Վանի սեպագրերի լեզուի վերաբերմամբ, ցոյց է տալի մի քանի յատկանիշ նշաններ, ըստ որում այս լեզուն պիտի ընդունվի որպէս արիական տեսակներից մէկը։ Լայարդ յայտնի չէ ում կարծիքն է առաջ բերում, ասելով թէ Վանի արձանագրերում թաթարի կամ մոնգոլեան տարրեր են նշմարվում. իսկ Գէորգ Բոլիսոն թէ՝ այս լեզուն ազգակցութիւն ունի մարաց սիստեմայի և Բաբիլոնի ակկատիեանների հետ։ Լենորման այս ամեն դաղափարները հերքում է և ձգտում է ցոյց տալու թէ Վանի արձանագրերի լեզուն վրաց լեզու է։ Պ. Պատկանեանը հերքում է այս վերջին միտքը, բացատրելով մի առ մի Լենորմանի գտած, ալարոդիեան և վրաց լեզուների մէջ, անյաջողակ քերականական համեմատութիւնները և ակներև ցոյց է տալի, որ Լենորմանի երկասիրութեան մէջ լեզուագիտութիւնը ամենանուազ կողմերն են։ Վերջապէս հերթը հասնում է Մորդմանի երկասիրութեանը *) «Գերմանական արեելեան ընկերութեան հանդիսի» էջերում։ Այս աշխատանքի հետևանքը այն է դուրս գալի, թէ Վանի սեպագրերի լեզուն պատկանում է արիական լեզուի գերդաստանին և ըստ այսմ՝ սա հայոց լեզու է,—իստակ հինաւուրց հայոց լեզու, և ի հարկէ այժմեան հայերէնից շատ հեռի. եթէ ի նկատի ունենանք այն հազար տարուայ ժամանակամիջոցը, որ բաժանում է միմանցից այս երկու բարբառը, այն ժամանակ դիւրըմբռնելի կը լինի սրանց զանազանութիւնը...—բայց այն լեզուն, որ Մորդմանը առաջարկում է մեզ, աւելցնում է Պատկանեանը,—որպէս հայոց հինաւուրց լեզուի մի օրինակ, ոչ թէ հայերէն արիական անգամ չէ, այլ մի առանձին լեզու։ Մորդմանը ինքն էլ խոստովանում է իր յօդուածի վերջերում թէ այդ հինաւուրց հայոց լեզուի հոլովները նմանութիւն ունեն թուրանական լեզուի հետ, իսկ բայերի ֆբլեկսիները մօտանում են հնդկա-եւրոպական բարբառներին։—Մեղք չի լինի, հեգնում է պ. Պատկանեանը,—մեր հոգուն, եթէ սկսենք պնդել թէ Մորդմանի յօդուածին յարակցեալ գլխաւորում (բառարան) չը կայ հայերէն մի բառ անգամ—обсалютно ни однаго. Քերականական ձևերումն էլ չը կայ ոչ մի նմանութիւն հայերէնի հետ, այնպէս որ պ. Մորդմանի ամբողջ եզրակացութիւնները դուրս են գալի շատ ու շատ անձնական....

Ինչպէս տեսանք վերևում Վանի գրութիւնների մէկ մասը փոխառնված է ասորեստանականի և Բաբիլոնի նշանախէցներից, միւս մասը կազմում է տեղային գրականական բերք, որոնց լեզուն մեզ յայտնի չէ։ Այս արձանագրերի լեզուի վերաբերմամբ մնում է մեզ յոյս դնել գիտութեան այնպիսի աստղերի վրա, որպիսի են Օպպերտ, Բոլիսոն և սրանց տաղանդաւոր հետևողները։

Վանի արձանագրերը՝ համարեա բոլորը՝ ըսկսվում են յայտնի բացականչութեան նշանաբանով դէպի Վանի բարձրագոյն աստուածութիւնը։ Այս աստուածներից աւելի հնագոյնը պիտի համարել՝ hal—di. որ մինչև այժմ յայտնի չէ եղել ուրիշ աղբիւրներից։ Այս haldi-ի հետ բաժանում են Վանի Օլիմպի նախագահութիւնը երկու ուրիշ աստուածներ՝ Տէիսպաս և Պարնիս։ Այս երրեակով չէ եզրափակվում Վանի աստուածների թիւը. Շուլցի ամբողջ XVII արձանագիրը նուիրված է Վանի աստուածներին և որտեղ բացատրվում է թէ՝ որպիսի զոհաբերութիւն և ինչ քանակութեամբ բերում էին այս և այն աստուածներին։ Այս արձանագրի մէջ բովանդակվում է Հին Հայաստանի ամբողջ պանտէօնը։ Օրինավի համար բերում ենք մի նախադասութիւն։ Հալդի Տիասպասին Պարնասին ազգային աստուածից (բերում ենք?) վեց ոչխար և մէկ ուխտ (?) Երևի այս նախադասութեան միտքը չէ հասկացվել ամբողջութեամբ, որովհետև հէնց սրանից յետոյ անյապաղ գալիս է կրկին Հալտի, որի համար նշանակված է այս անգամ ոչ թէ վեց ոչխար. այլ 17 գոմէշ և 34 ոչխար և այլն։ Այս արձանագրում տեղ են գտել 75—80 աստուածներ, որոնց անունները առանց մեծ բացառութեան չեն կարդացվում։ Ըստ Մորդմանի այսպիսի անուններ ունեն այս աստուածները՝ Khutui. Tura, Zibipara, Arsimit, Hamaspa, Didua, Vilardi, Atbi, Kuera, Adaruta և այլն։ Մի քանի աստուածներ անուանած են ոչ յատուկ անունով, այլ քաղաքի և վայրաց անուններով. զօր՝ աստուած Տուսպա քաղաքի և այլն. կայ ևս մի աստուած, որի անունը յիշեալ արձանագրում չը կայ և որին պատահում ենք Սարգոնեան արձանագրում. սա՝ Bagapartu, ինչպէս կարդում է Օպպերտ,—կամ Bagmastuv ըստ Լենորմանի և Սմիտի։

Համեմատելով այս անունները այն անունների հետ, որոնց երկրպագում էին հայերը պատմական ժամանակում, այսինքն՝ Քրիստոսից առաջ VI դարուց յետոյ, մենք կը գանք այն եզրակացութեան որ VIII և VII դարերի միջում կատարվել է հայոց կրօնական և այլ վերաբերութեամբ, հիմնաւոր յեղափոխութիւն, աւանդական և քաղաքական վերաբերմամբ հայերը ընկնում են դրացիների հզօր ազդեցութեանց տակ։ Արամազդը դառնում հայոց բարձրագոյն աստուածը, բայց Արիմանը, որպէս հայոց աստուած չէ յիշվում ոչ մի տեղ։ Ահա այն աստուածների անունները, որք հաստատվել են Հայաստանում Իրանի ազդեցութիւնից. Արամազդ, Վահագն, Միհր, Տուր։ Սանդրամետ և այլն։ Սեմականներից անցել են Հայաստան զանազան տարեթուներում՝ Նանէ, Բել, Նաբոգ և այլն։

Արձանագրերից ամենահինը ընդունված է համարել Շուլցի I և XXXVI։ Առաջինումը (I) խօսվում է մէկ թագաւորի, Լուտիբրիի որդու վրա։ Թագաւորել է այս Լուտիբրին երբ և իցէ—յայտնի չէ, բայց սա Վանի արձանագրերի ամենահին անձն է հանդիսանում, Այս Լուտիբրիի որդու անունը առ ժամանակ պիտի կարդացվի այսպէս, Բելիդուրուս։ XXXVI արձանագրում պատահում են Isbuinis-ին Բելիդուրուսի որդուն։ Այս Իսբուինիսին նուիրված է և XVII արձանագիրը։ Այստեղ Իսբուինիսը երևում է ոչ միայնակ, այլ իր որդոյ Մինուասի ընկերութեամբ, որին վերցրել է նա, երևի, իրան իշխանակից։ Ուրեմն, Իսբուինիս, Բելիդուրուսի որդին է. Մինուաս, Իսբուինիսի որդին, հուսկ ուրեմն, Մինուասը Լուտիբրի չորրորդ ուղղագիծ սերունդն է։ XVIII, XIV, XV և Շուլցի ուրիշ բազում արձանագրերում Մինուասը անուանում է իրան Իսբուինիսի որդի և Վիսիտա աշխարհի և Տուսպա քաղաքի թագաւոր։ Երևելին այն է, որ Վանի թագաւորները գէթ միանգամ չեն անուանում իրանց Ուրարտի և Վանայ թագաւորներ, որպիսի անուններին մենք ստէպ պատահում ենք ասորեստանականների մէջ...

Մինուասից յետոյ գալիս է նրա որդին Արգիստիսը, որին յաջորդում է նրա որդի Բելիդուրուս II։ Սրանց թագաւորութիւնը տեել է մօտաւորապէս 150 տարի։ Ասորեստանական աղբիւրներից մենք տեսնում ենք, որ այս թագաւորներից առաջ եղել են և ուրիշները, որք տիրում էին այս կողմերը, բայց այնու ամենայնիւ միայն այս հինգն են թողել յիշատակ Վանի արձանագրերում։ Սրանց ժամանակը հարկաւոր է համարել Քրիստոսից առաջ IX—VII դարերի մէջ։

Այս է ահա Վանի արձանագրութիւնների վերծանութեան կարճառօտ պատմութիւնը։ Հետեւեալ նամակում կաշխատենք ծանօթացնելու ընթերցողներին այս գրքի միւս գլխների հետ։

Գաս. Եաղուբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք մի փոքրիկ գրքոյկ, որ այս օրերս մամուլի տակից դուրս եկաւ։ Դա պ. Հ. Տէր-Միքայէլեանցից թարգմանված Ալֆօնս Դոդէի «Թզուկ» վէպիկն է։ Գրքոյկը ծախվում է կենտրոնական և կովկասեան դպրանոցներում յօգուտ Թիֆլիսի ռէալական դպրոցի հայ աշակերտների ապագայ հայոց գրադարանի։ Գինը 30 կոպէկ է, տպված է Թիֆլիսում, Մովսէսյ Վարդանեանցի և ընկ. տպարանում, ներկայ 1881 թուին։ Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի դիմել այս հասցէով, Тифлисъ Реальное Училище Г. Теръ-Микелову.

—

Շնորհակալութեամբ ստացանք մեր յայտնի հայագէտ պ. Էմինից նրա գրուածներից երկուսը։ «Сказанія о святыхъ Ѳаддеѣ и Варѳоломеѣ, апостолахъ Арменіи» և նոյնպէս «Новооткрытое армянское pendent къ посланію Публія Линтула въ Римскій сенатъ объ Іисусѣ Христѣ» Այդ երկու տետրակները տպված են Մոսկվայում։

—

Լսում ենք որ պ. Ա. Երիցեան դիտաւորութիւն ունի այս օրերս հայերէն լեզուով մի քանի դասախօսութիւններ կարդալ Արծրունու թատրոնում։

—

Կիրակի, 11-ին հոկտեմբերի, պ. Կազընով, ֆրանսիական երևելի ձեռնածուն, իր առաջին ներկայացում տուեց Արծրունու թատրոնում։ Ժողովուրդ բաւական շատ կար։ Երկկ պարոնը կրկնեց իր ներկայացումն և մինչև հետեւեալ կիրակի կը շարունակի ամեն երեկոյ ներկայացնել, ամեն անգամ փոխելով իր պրոգրամը։ Պ. Կազընով մի քանի բաներում մեծ ճարպիկութիւն ցոյց տուեց և հասարակութիւնը վարձատրեց նրան իր ծափահարութիւններով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏՐՕՏՏԸՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՑԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱՊՈՑՏ ՏԵՏՐԻ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ

Երկու տեսակ Հայերէն կայ, հին կամ եկեղեցական լեզու որ կը գործածուի կրօնական գրուածոց մէջ, և նոր կամ աշխարհիկ լեզու կը կոչուի։ Երկունք ալ հարուստ լեզուներ են և ունին ընդարձակ մատենագրութիւն։ Հայերէն այրուբենն որ քրիստոնէութեան ի Հայս մուտ գտնելէն քիչ հետը հնարուեցաւ հասարակ է թէ հին և թէ նոր Հայերէնին։

Ամեն դաւանութենէ Հայոց մեծագոյն մասը կը խորհի Հայերէն, բայց կան տեղերուր Հայք կորուսած են իրենց ազգային լեզուն։ Նա մանաւանդ կը գտնուին Հայեր որ Քրդերէն միայն գիտեն, ուրիշներ, ինչպէս Մարոնի Կաթոլիկ Հայք, որ Արաբերէն միայն կը խօսին, դարձեալ ուրիշներ՝ որոց լեզուն Թրքերէն է։ Կոստանդնուպօլսոյ մէջ կը հրատարակուի Հայերէն գրով Թրքերէն երեք լրագիր այն Հայոց համար որոց աւելի ընտանի է Թուրքերէնը քան իրենց մայրենի լեզուն։

Ընդհակառակն Հայաստանի մէջ կը գտնենք ցունադաւան ժողովուրդ մը որ Հայերէն կը խօսի. կան նաև գնչուներ որ կը խօսին Հայերէն։

Հայք ընդհանրապէս արևելեան ազգաց մէջ նշանաւոր են իբրև հանճարեղ, հանդարտաբարոյ, աշխատասէր և հմուտ առուեստից։ Կ. Պօլսոյ մէջ կան Հայեր որ Օսմ. կառավարութեան քով մեծամեծ պաշտօններ կը վարեն, բայց Հայաստանի գաւառաց մէջ քաղաքային պաշտօն վարող Հայեր չը կան կամ շատ քիչ են։ Հայք ի բնէ պատերազմասէր չեն, և ի վաղուց անտի ուրիշ ցեղերէ անդադար հարստահարուելով և ճնշելով Թուրքիոյ մէջ սովրած են ուրիշներու առջև նուաստ դիրք բռնել և ձշմարտութիւնը չը յայտնել, ընթացք մը որ մանաւանդ արևմտեան ազգաց զզուանք կուտայ։

Ռուսիոյ մէջ ուր Հայք աւելի մեծ անձնական ազատութիւն կը վայելեն քան ի Թուրքաստան, նաև աւելի լաւ կը դաստիարակուին և արտօնութիւն ունին մտնել զինուորական ծառայութեանց մէջ, շատք ի Հայոց նշանաւոր եղած են։ Վերջին պատերազմին ատեն Ասիոյ կողմը Ռուսիոյ զօրապետաց մէջ ամենէն նշանաւորք էին Լորիս Մէլիքոֆ, Լազարէֆ և Տէր Ղուկասոֆ Հայ զօրապետները։

Այս ազգին գլխաւոր թերութիւնը, ինչպէս կըսէ Հայ մատենագիր մը, անմիաբանութիւնն է որ արդիւնք է անձնասիրութեան։ Կը թուի թէ այս ցեղին հին մոլութիւնն է այս, քանզի կը յաւելու նոյն մատենագիրը թէ այս անմիաբանութիւնն եղած է պատճառ Հայոց իրենց թագաւորութիւնը կորսնցնելու։

Ինչպէս հին ատենը, նոյնպէս հիմա Հայոց գլխաւոր գործն եղած է երկրագործութիւն և վաճառականութիւն։ Իբրև վաճառական էին և են ցարդ երևելի, և օտար երկիրներու մէջ ապրող Հայոց մէջ կը գտնուին շատեր որ մեծ հարստութիւն դիզած են։

Գալով բնիկ Հայոց, ասոնց գլխաւոր գործն է երկրագործութիւնը, բայց մեծամեծ քաղաքներու մէջ Հայոց մեծագոյն մասն արուեստագէտ է, ինչպէս՝ ոստայնանկ, խաղախորդ, ներկարար, այլովքն հանդերձ։ Կան նաև պղնձագործք, երկաթագործք, ոսկերիչք, դերձակք, խոհարարք, հացագործք, և որ ի կարգին։ Նաև սեղանաւորաց և գլխաւոր վաճառականաց շատերն Հայ են։*)

*) 1. Պարսից. 2 Մարաց կամ սկիւթացոց և 3 Ասորեստանեայց։ Եթէ չը յիշենք Ակկադիեանը —չորրորդ՝ Վանայ։

*) Etudes sur les inscriptions assyriennes de Persepolis etc. Padoue. 1850.

*) A. D. Mordtmann—Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend, ի Zeitsch. D. M. Ges. 1872, հմր 465—696.

*) Փառք Աստուծու, որ գտնվեցաւ վերջապէս Տրօտտրի պէս մի դիտող և ազնիւ մարդ, որը շատ ուրիշ օտարազգիների նման չէ հաստատում թէ «Հայերը միայն վաճառականութեամբ և չարչիութեամբ են պարապվում»։ Տրօտտրի նման